ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՄԱՐԻԱՄ ՎՐԵԺԻ

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԲԱԽՆԱՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ, ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ 1918 -1920 ԹԹ.

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր

ԵՐԵՎԱՆ - 2011

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Հարությունյան Հ. Մ.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Զոհրաբյան Է. Ա.

պատմական գիտությունների թեկնածու,
դոցենտ Հարությունյան Ա.Հ.

Առաջատար կազմակերպություն՝ Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան
պետական մանկավարժական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2011 թ. դեկտեմբերի 16-ին, ժամը 14^{00}-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի 004 մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2011 թ. նոյեմբերի 14-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Մուրադյան Հ.Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ. Հայերին բնաջնջելու ճանապարհով նրա պատմական հայրենիքին տիրանալու Օսմանյան Թուրքիայի քաղաքականությունը, որը սկսվել էր դեռևս 19-րդ դարի 90-ական թվականներին, իր բարձրակետին հասավ Առաջին աշխարհամարտի տարիներին:

Այդ քաղաքականության արդյունքում ոչնչացվեց կամ տարագրվեց կայսրության տարածքում ապրող գրեթե ամբողջ հայությունը: Զոհերի թիվը հասավ 1.5 մլն-ի: Արևմտահայությունը զրկվեց իր պատմական հայրենիքից:

Թուրքական իշխանությունների կողմից 20-րդ դարի առաջին երկու տասնամյակներում իրականացվող ցեղասպանության քաղաքականության ծանրագույն հետևանքներից էր՝ հայ երեխաների որբացումը: Նրանց նկատմամբ թուրքական իշխանությունների կողմից իրականացվող ոչնչացման, բռնի մահմեդականացման և թուրքացման հրեշային ծրագիրը հիմնավորապես վկայում են այն մասին, որ հայերի հանդեպ կիրառվող քաղաքականությունը ողջ հայ ժողովրդի ընդհանուր բնաջնջումն իրականացնելու և նրան «բիոլոգիական գենոցիդի» ենթարկելու նպատակ էր հետապնդում:

Այսպիսով, հայ որբ երեխաների պատմության վերհանումը Հայոց ցեղասպանության ամբողջական պատմության բաղադրիչ մասերից է, և առանց այդ խնդիրների բացահայտման և գիտական վերլուծության, ցեղասպանության պատմության ուսումնասիրության խնդիրը չի կարելի ամբողջական համարել:

Ժամանակակից Թուրքիայում, երբ պետական քաղաքականության մակարդակ է բարձրացված հակահայ քարոզչությունը, թուրք պատմագրությունը, կեղծելով կամ վերացնելով գոյություն ունեցող փաստերը, վիճարկում է նաև զոհերի թիվը, նպատակ ունենալով ապացուցել, թե հայ ժողովրդի ցեղասպանություն տեղի չի ունեցել:

Ուստի, նշված խնդրի լուսաբանումն ունի ինչպես պատմագիտական և արդիական, այնպես էլ քաղաքական նշանակություն, քանզի ցույց է տալիս, թե ինչպիսի ողբերգական հետևանքներ կարող են լինել, երբ ցեղապաշտական գաղափարաբանությունը դառնում է պետական քաղաքականություն և բարձրացվում է պետական իշխանության մակարդակի:

Ռուս գրող Յու. Վեսելովսկին դեռևս Առաջին աշխարհամարտի ժամանակ գրում է «Տանջվող երեխաներ» հոդվածաշարքը[1], որի մեջ մերկացնում է թուրքական գազանությունները և այն միտքն է արտահայտում, թե պետք է կազմել և սերունդներին հանձնել «Հայ երեխայի գիրքը», որը կլինի հայ ժողովրդի ապրած դժոխային ժամանակաշրջանի ամենաողբերգական կողմերից մեկը:

«Այդ գիրքը, որի մեջ կմտնեն բոլորովին անմեղ հայ երեխաների գազանային ոչնչացման փաստերը, - գրում է հեղինակը, կդառնա մի նոր մեղադրական ակտ թուրքական ջարդարարների դեմ և ***ահեղ նախազգուշացում բոլոր նման հնարավոր երևույթների դեմ***» (ընդգծումը մերն է):

---

[1]Веселовский Ю., Трагедия турецкой Армении, Москва, “Звезда”, 1915, с. 5:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ.

Հայտնի է, որ թուրքերի կողմից իրականացվող հայկական գենոցիդը շարունակվել է նաև աշխարհամարտին հաջորդող ևս մի քանի տարիների ընթացքում:

Այդ նպատակին էին ուղղված թուրքական 2 արշավանքները՝ 1918 և 1920 թվականներին, որոնց զոհ գնաց ևս 500.000 հայ, իսկ որբ երեխաների թիվը Կովկասում հասավ 50.000-60.000 -ի[2]:

Այսպես, 1918 և 1920 թվականների թուրքական արշավանքները, կովկասյան թուրքերի կողմից Անդրկովկասում կազմակերպված հայկական կոտորածները, և վրացի ազգայնականների հակահայ քաղաքականությունը Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո, երկրամասում առաջ բերեցին գաղթականության և որբ երեխաների նոր հոսք՝ կազմված արևելահայերից:

Ելնելով վերոնշյալից, մեր առջև նպատակ ենք դրել ներկայացնել Անդրկովկասյան երկրամասում, Արևելյան Հայաստանում ապաստանած արևմտահայ և արևելահայ որբ երեխաների ամբողջական պատմությունը Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին՝ 1918-1920 թթ.-ին, երբ որբ երեխաների խնամատարության և դաստիարակության նպատակով առաջին անգամ մշակվում և իրականացվում է ազգային-պետական քաղաքականություն:

Աշխատության մեջ մենք հետապնդել ենք հետևյալ խնդիրները՝

- Լուսաբանել Առաջին աշխարհամարտի տարիներին թուրքական բարբարոսությունների հետևանքով որբացած՝ Անդրկովկաս և Հյուսիսային Կովկաս ապաստանած հայ երեխաների պատմությունը:
- Ճշտել այդ երեխաների մոտավոր թիվը, տեղաբաշխումը և նրանց պահպանության համար որբանոցների ստեղծման անհրաժեշտությունը:
- Լուսաբանել ցարական իշխանությունների վարած քաղաքականությունը հայ որբերի նկատմամբ:
- Բացահայտել հայ հասարակության և հայոց եկեղեցու դերը նրանց պահպանության գործում:
- Վեր հանել հայ և օտար կազմակերպությունների և բարեգործական ընկերությունների գործունեությունը:
- Ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության պետական քաղաքականությունը որբախնամ գործում:
- Տալ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող երեխաների վիճակի իրական պատկերը:
- Ցույց տալ մինչև Խորհրդային կարգերի հաստատումը վերը նշված երկրամասերում ծվարած հայ մանուկների տեղաշարժը, թիվը, կացությունը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ. Մեր կողմից ուսումնասիրվող հիմնահարցերի սկզբնավորման պատմաքաղաքական ակունքների և հետագա իրադարձությունների մասին առավել հստակ և ամբողջական պատկերացում կազմելու համար նպատակահարմար ենք գտել ուսումնասիրության շրջանակները սկսել 1914-1915 թթ.-ից, երբ հայոց մեծագույն ողբերգության հետևանքով որբացած հայ երեխաների առաջին քարավանները հանգրվանեցին Արևելյան Հայաստանում և Անդրկովկասում, և հասցնել մինչև

[2] ՀԱԱ, ֆ. 201, g. 1, գ. 607, թ. 1–3:

Հայաստանի Հանրապետության անկումը և խորհրդային կարգերի հաստատումը՝ շեշտը դնելով հիմնականում Հայաստանի Հանրապետության տարիներին որբերի խնամատարության և նրանց նկատմամբ պետական քաղաքականության խնդիրների վրա:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.

Աշխատասիրության գիտական նորությունը կայանում է նաև նրանում, որ

1. լուսաբանում է արևմտահայ և արևելահայ որբերի ամբողջական պատմությունը,
2. բացահայտում է Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից այդ երեխաների նկատմամաբ առաջին անգամ ազգային - պետական քաղաքականության մշակման և իրականացման աշխատանքները,
3. ներկայացնում է Հայաստանից դուրս՝ հարևան հանրապետություններում հայտնված որբերի թվաքանակը տեղաբաշխումն ու կացությունը:
4. լուսաբանում է ժամանակի բարեգործական ընկերությունների, հասարակական կազմակերպությունների ազգանվեր գործունեությունը և նրանց կողմից պահվող որբանոցների պատմությունը,
5. ներկայացնում է ոչ միայն հայ, այլ նաև օտարերկրյա կազմակերպությունների որբախնամ գործունեությունը և բարեգործությունը, ինչպես օրինակ՝ Մերձավոր Արևելքի օգնության Ամերիկյան կոմիտեի, առանց որի օգնության գուցեև հնարավոր չլիներ հայ երեխաների մեծ մասի փրկությունը:

Ժամանակի հասարակական կազմակերպությունների ազգանվեր գործունեության բացահայտումը ուսանելի կարող է լինել նաև ներկայումս գործող շատ հասարակական կազմակերպությունների համար:

Ատենախոսությունում կատարված եզրահանգումները, արտահայտված տեսակետները կարող են օգտակար լինել և տեղ գտնել «Հայոց պատմության» ձեռնարկներում, հայոց ցեղասպանության պատմությունն ընդհանրացնող աշխատություններում:

ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ. Ուսումնասիրությունը շարադրված է պատմական իրողությունների համեմատական և քննական վերլուծության մեթոդաբանական սկզբունքի հիման վրա: Մեր կողմից ուսումնասիրվել են Հայոց ցեղասպանության, Հայաստանի Ազգային արխիվում և Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում պահվող նյութերը, որոնք համեմատական վերլուծության միջոցով օգտագործվել են թեմայի ուսումնասիրությունը ամբողջացնելու համար: Որպես հիմք ընդունել ենք հարցերի ներկայացման և հետազոտման առարկայությունը՝ անաչառությունը պահպանելով:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ.

Ատենախոսությունը քննարկվել և պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան–ինստիտուտի Հայոց ցեղասպանության աղբյուրագիտության բաժնում: Ատենախոսության որոշ հարցեր զեկուցման ձևով ներկայացվել են ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի կողմից կազմակերպված գիտաժողովներում: Ուսումնասիրության առավել կարևոր դրույթներ արտացոլվել են հեղինակի չորս հոդվածներում:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ.

Հայ որբերի խնամատարության և որբանոցների կազմակերպման պատմությունը մասնավորապես Հայաստանի Հանրապետության տարիներին, լուրջ ուսումնասիրությունների չի ենթարկվել:

Վերոնշյալ խնդրի վերաբերյալ առաջին ուսումնասիրությունը կատարվել է Գ. Էդիլյանի կողմից[3]: Լինելով որբախնամ կազմակերպությունների աշխատանքները համակարգող Հայկական կենտրոնական կոմիտեի որբանոցների տեսուչի պաշտոնում, Գ. Էդիլյանը այցելել է ժամանակի շուրջ 55 որբանոցներ և մանրամասնորեն գրի է առել որբանոցների ստեղծման, կազմակերպման և խնամակալ ընկերությունների պատմությունը, անդրադարձել է առողջապահական խնդիրներին, դպրոցական գործին, մասնագիտական կրթությանը և կազմակերպչական խնդիրներին, առանձնացրել դրական և բացասական երևույթները: Այս առումով գրքույկը վավերագրական արժեք է ներկայացնում:

Աշխատությունը գրվել է 1917 թվականին և ընդգրկում է 1915-1916 թթ. ստեղծված որբանոցների պատմությունը:

Այս հարցին մասնակիորեն անդրադարձ է կատարվել նաև Ա. Մովսիսյանի գրքույկում[4]: Այն ավելի շատ դաստիարակչական–քարոզչական բնույթ ունի և հեռու է գիտական լինելուց:

Որբանոցների և հատկապես նրանցում ի հայտ եկած ուսումնա-դաստիարակչական խնդիրներին է անդրադարձել Թ. Բալասանյանը իր թեկնածուական ատենախոսության մեջ[5]:

Ժամանակագրական առումով աշխատանքն ընդգրկում է 1915-1929 թվականները: Այստեղ առաջին անգամ փորձ է արվել արխիվային նյութերի, մամուլի և համապատասխան գրականության հիման վրա բացահայտել ազգային բարեգործական ընկերությունների, Ամերկոմի և խորհրդային շրջանի որբանոցների ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը և մեթոդները:

Սակայն հեղինակի խնդրո առարկան եղել է մանկավարժական և դաստիարակչական աշխատանքների ուսումնասիրումը, և բարեգործական ընկերությունների գործունեությանը, որբանոցների կազմակերպման խնդիրներին, հատկապես Հայաստանի առաջին հանրապետության տարիներին, միայն հպանցիկ անդրադարձ է կատարվել:

Հայ որբերի ճակատագրին և դրա հետ առնչվող հարցերին է անդրադարձել նաև Լ. Ազատյանը իր եռագիրք աշխատության մեջ[6]:

Առաջին գրքում ամենայն մանրամասներով ներկայացված են աշխարհասփյուռ արևմտահայ որբերի և որբանոցների պատմությունը, հայ և օտարերկրյա մարդասիրական կազմակերպությունների, անհատ բարեգործների, առանձին միսիոներների գործունեությունը:

---

[3] Էդիլյան Գ., Գաղթականական որբանոցներ, Թիֆլիս, 1917:

[4] Մովսիսյան Ա., Կյանքը դաշնակցական որբանոցներում, Եր., 1931:

[5] Բալասանյան Թ., Հայաստանի որբանոցները և դրանց դերը աճող սերնդի դաստիարակության գործում /1915-1930 թթ./, Եր., 1970, թեկնածուական ատենախոսություն, Ազգային գրադարան, ատենախոսությունների և սեղմագրերի բաժին, 07.000:

[6] Ազատեան Լ.,Հայ որբերը Մեծ եղեռնի, Լոս Անճելլըս, 1966, 1999, 2002:

Երկրորդ գրքում պատմվում է ցեղասպանության վերապրածների տառապանքների և թուրքական բարբարոսությունների մասին, կան որբ երեխաների կենսագրական մանրամասներ:

Երրորդ գրքում զետեղված են որոշ արխիվային փաստեր և վկայություններ, որոնք մասամբ վերաբերվում են մեր ուսումնասիրության ժամանակաշրջանին: Ընդհանուր առմամբ, հեղինակը վիթխարի աշխատանք է կատարել հայ որբ երեխաների պատմության ուսումնասիրության շուրջ:

Որբախնամ գործում Հայաստանի Հանրապետությանը անգնահատելի օգնություն ցուցաբերած Մերձավոր Արևելքի օգնության ամերիկյան կոմիտեի գործունեության վերաբերյալ կարևոր վկայություններ կան հատկապես Ս. Ավետիսյանի աշխատությունում[7]:

Հեղինակն ամենայն մանրամասներով ներկայացրել է կոմիտեի գործունեությունն ընդհանրապես և հայ երեխաների խնամքը՝ մասնավորապես:

Ամերկոմի որբախնամ գործունեության մասին գրելիս, ատենախոսը մեծ ուշադրության է արժանացրել կրթական խնդիրներին և Հայաստանի իշխանությունների դիրքորոշմանը:

Բացի նշված աշխատություններից, իրենց կենսագրական ստեղծագործություններում որբ երեխաների կյանքին և դժվարություններին են անդրադարձել հայ գրողներ, որբանոցային նախկին սաներ Ա. Ծառուկյանը[8], Վ. Նորենցը[9], ճարտարապետ՝ Վ. Հարությունյանը[10]: Ծանոթանալով նրանց կենսագրական մանրամասներին՝ առավել պատկերավոր են դառնում որբ երեխայի բարոյահոգեբանական վիճակը, նրա ապրումները:

Այս առումով հետաքրքիր է նաև Կ. Միքայելյանի «Հոշոտված Հայաստան» ժողովածուն[11], որը նույնպես գրվել է մանկատան սաների անձնական հիշողությունների հիման վրա և պատմում է թուրքական ոճրագործությունների մասին:

Արևմտահայ որբերի թվի և տեղաբաշխման մասին որոշ տեղեկություններ կան Մ. Արզումանյանի աշխատությունում[12]:

Արևմտահայ որբ երեխաները Անդրկովկասի և Արևելյան Հայաստանի սահմանները հատեցին գաղթականների առաջին քարավանների հետ միասին դեռևս 1914-1915 թվականներին: Սակայն այս ժամանակահատվածում նրանց նկատմամբ չկար հատուկ խնամք, չէին կազմակերպվել որբանոցները: Ուստի սկզբնական շրջանում այդ երեխաների կացության, տեղաբաշխման և պահպանության խնդիրները անմիջականորեն առնչվում են գաղթականների խնդիրների հետ:

Այս առումով բավականին հետաքրքիր են Ա. Հարությունյանի[13], Է. Դանիելյանի[14] և Ա. Հակոբյանի[15] աշխատությունները:

---

[7] Ավետիսյան Ս., Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտեի գործունեությունը Հայաստանում 1918-1930 թթ., Եր., 2007:

[8] Ծառուկյան Ա., Մանկություն չունեցող մարդիկ, Եր., 1963:

[9] Նորենց Վ., Հուշեր և արձագանքներ, Եր., 1968:

[10] Հարությունյան Վ., Կյանքիս քառուղիներում, Եր., 1999:

[11] ԳԱԹ, Կ. Միքայելյանի Ֆոնդ, թիվ 21:

[12] Արզումանյան Մ., Հայաստան, 1914-1917, Եր., 1969:

[13] Հարությունյան Ա., Հայոց մեծ եղեռնը և հայ գաղթականությունը Կովկասում 1914-1916 թթ., Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, 2002, թիվ 6, էջ 19-31:

Հատկապես է. Դանիելյանի աշխատությունը, որը ժամանակագրական առումով ընդգրկում է 1914-1922 թվականները, առավել ամբողջական պատկերացում է տալիս նշված հարցերի շուրջ: Իսկ Ա. Հակոբյանի աշխատության մեջ ամփոփված են 1918-1920 թթ. Հայաստանի առաջին հանրապետության օրենսդիր մարմնի որոշումները՝ այդ թվում գաղթականների և որբ երեխաների պահպանության համար անհրաժեշտ միջոցառումները, ինչը շատ դեպքերում աղբյուրագիտական նշանակություն ունի նյութի ուսումնասիրության համար:

Թեմայի հետ անմիջականորեն առնչվող այնպիսի հարցերի, ինչպես Հայաստանի Հանրապետության ներքին կյանքը և սոցիալ-տնտեսական դրությունը, անդրադարձել են Ս. Վրացյանը[16], Ալ. Խատիսյանը[17], Գ. Չալխուշյանը[18] և ուրիշներ: Հանրապետության մշակութային կյանքին, այդ թվում որբ երեխաների կրթական հարցերին մասնակիորեն անդրադարձել է Գ. Վարդանյանը[19]:

Թուրքական արշավանքներին, Ադրբեջանի կողմից հայկական կոտորածներին, Վրաստանի վարած հակահայ քաղաքականությանը և այլ հարցերին անդրադարձ է կատարվել Ս. Վրացյանի[20], Հր. Սիմոնյանի[21], Ա. Օհանջանյանի[22], Ա. Մելքոնյանի[23], Յու. Հովսեփյանի[24], Գ. Ստեփանյանի[25] աշխատություններում:

Բոլոր վերը նշված աշխատությունները մեծապես օգնել են թեմայի հետ առնչվող բազմաթիվ հարցերի լուսաբանման և ուսումնասիրության համար: Սակայն ուսումնասիրությունների համար իբրև սկզբնաղբյուր են ծառայել գլխավորապես Հայաստանի Ազգային արխիվի (այսուհետ՝ ՀԱԱ) փաստավավերագրական նյութերը, որոնց մի մասը շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ:

Ուսումնասիրության համար օգտագործվել են Հայաստանի Ազգային արխիվի (ՀԱԱ) տարբեր ֆոնդերի փաստաթղթեր՝ ֆ. 28, 472, 57, 121, 27, 239, 50,

---

[14] Դանիելյան է., Եղեռնից փրկված հայ փախստականները Անդրկովկասում, 1914- 1922 թթ., Եր.,1996, թեկնածուական ատենախոսություն, Ազգային գրադարան, ատենախոսությունների և սեղմագրերի բաժին, 07.000:

[15] Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները 1918 - 1920 թթ., Եր., 2005:

[16] Վրացեան Ս., Հին թղթեր, նոր պատմութեանց համար, Բեյրութ, 1962:

[17] Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պեյրութ, 1968:

[18] Չալխուշյան Գ., Ինչ էր և ինչ պիտի լինի մեր ուղին, Վիեննա, 1923:

[19] Վարդանյան Գ., Մշակույթը Հայաստանի առաջին հանրապետությունում /1918-1920 թթ./, Եր., 2003:

[20] Վրացյան Ս.,Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993:

[21] Սիմոնյան Հր., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Եր., 1991:

[22] Օհանջանյան Ա., 1915 թ.: Անհերքելի վկայություններ, Եր., 1997:

[23] Մելքոնյան Ա., Հայկական կոտորածները Ախալքալաքի գավառում /1918 և 1921 թթ./, Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, 2001, թիվ 4, էջ 3-12:

[24] Հովսեփյան Յու., Հայերի ցեղասպանությունը Ադրբեջանում /1918-1920 թթ./, Հայոց ցեղասպանությունը, ուսումնասիրություններ, Եր., 2001, էջ 182-190:

[25] Ստեփանյան Գ., Հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանական մարտերը Նուխի և Արեշ գավառներում /1918 և 1920 թթ./, Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, 2002, թիվ 5, էջ 23-33:

240, 199, 276, 201, 205, 206, 207, 113, 122, 198, 441, 200, 223, նաև տվյալներ Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանից /ԳԱԹ/ Կ. Միքայելյանի, Ա. Վշտունու, Գ. Մահարու ֆոնդերից:

Աշխատանքը պատրաստելիս հարուստ նյութեր ենք հավաքել նաև ժամանակի պարբերական մամուլից՝ «Հորիզոն», «Մշակ», «Աշխատանք», «Արև», «Մուրճ», «Ժողովուրդ», «Հայաստան», «Աշխատավոր», «Համբավաբեր», «Լրաբեր», «Կառավարության լրաբեր», «Հառաջ», «Զանգ», «Սոցիալիստ-հեղափոխական», «Հայաստանի աշխատավոր», «Բանվոր», «Խոսք», «Արդարության ձայն», «Վան Տոսպ», «Հայրենիք», «Կռան», «Փարոս»:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ.

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված սկզբնաղբյուրների ու գրականության ցանկից: Ընդհանուր ծավալը կազմում է 143 էջ:

Ներածության մեջ հիմնավորված են թեմայի արդիականությունը, գիտագործնական նորույթը և նշանակությունը: Ներկայացված են նպատակներն ու խնդիրները, ժամանակագրկան շրջանակները, աղբյուրների տեսությունը և ուսումնասիրվածության աստիճանը:

Առաջին գլխում՝ **«*Որբությունը որպես ցեղասպանության հետևանք: Որբախնամ գործի սկզբնավորումը*»,** ներկայացվում է Կովկասյան ճակատում ռազմական գործողությունների և արևմտահայերի զանգվածային կոտորածների հետևանքով Ռուսական կայսրության տարածքում հայտնված հայ փախստականներին և որբ մնացած երեխաներին ապաստանելու, նրանց ֆիզիկական գոյությունն ապահովելու համար ձեռնարկված արտակարգ միջոցառումները:

Ողջ հայության համար մղձավանջային այս ժամանակահատվածում էլ սկսվեց հայ որբանոցների և որբախնամ գործի կազմակերպումը:

Փախստականների, այդ թվում որբերի օգնության գործը կազմակերպելու համար հասարակական հիմունքներով ստեղծվեցին բազմաթիվ կազմակերպություններ՝ Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը, Հայկական կենտրոնական կոմիտեն, Մոսկվայի և Պետրոգրադի հայկական կոմիտեները, Հայ նպաստամատույցը, Հայ կանանց և Հայրենակցական միությունները, Եղբայրական օգնության կոմիտեները, Բաքվի Մարդասիրական-կուլտուրական, Հայ գյուղատնտեսական ընկերությունները, Քաղաքների միության կոմիտեն և այլն:

Հայազգի պետական գործիչ, Պետական Դումայի անդամ Պապաջանովի միջնորդությամբ հաջողվում է սահմանել պետական նպաստ՝ յուրաքանչյուր որբ երեխայի համար 25 ռուբլի միանվագ և 15 ռուբլի ամսական չափով[26]:

Պետական հատկացումները փոխանցվելու էին Կովկասյան ճակատի գաղթականների տեղավորման գրասենյակ, իսկ այդտեղից՝ որբախնամ մարմիններին: Որպեսզի այս գործում արհեստական դժվարություններ չստեղծվեն և գումարների փոխանցման ընթացքում խնդիրներ ու խառնաշփոթ չառաջանա կապված որբախնամ մարմինների բազմազանության հետ, 1915 թ. Թիֆլիսի հայոց եկեղեցու առաջնորդարանում կայացած հայ բարեգործական ընկերությունների ընդհանուր ժողովը, որոշում է ստեղծել մեկ ընդհանուր օղակ, որի դերով հանդես է գալիս Հայկական կենտրոնական կոմիտեն՝ այդ կազմակերպությունները Կովկասյան համապատասխան իշխանությունների հետ

[26] ՀԱԱ., ֆ. 28, ց. 1, գ. 602, թ. 10:

կապելու և պետական հատկացումները հասցեատերերին փոխանցելու նպատակով[27]:

Որբախնամ հաստատությունները յուրաքանչյուր երեխայի համար ստանում էին պետական նպաստ՝ Թամամշևի գրասենյակից (15 ռուբլի ամսական, կամ 50 կոպ. օրական) Հայկական Կենտրոնական Կոմիտեի միջոցով, որին էլ հաշվետու էին կատարած ծախսերի համար[28]:

Ստացվեց այնպես, որ որբախնամ գործով սկսեցին զբաղվել բոլոր նրանք, ովքեր դրա համար նյութական միջոցներ կամ շենքային հարմարություններ ունեին:

Արդեն 1915-16 թթ-ին որբերի կարիքները հոգալու գործով զբաղվում էին Եղբայրական Օգնությունը, Միացյալ ընկերությունը Ալեքսանդրոպոլում, Պետրոգրադի և Մոսկվայի կոմիտեները, Գանձակի գաղթականական կոմիտեն, Կանանց կոմիտեն (Թիֆլիսում և Ալեքսանդրոպոլում), Ծխական համայնքը, Օրիորդաց կոմիտեն, Կովկասի Հայոց բարեգործական ընկերությունը, անհատ խնամակալներ և այլն:

Կազմակերպությունների և ընկերությունների այս բազմազանությունը մի կողմից գովելի էր, բայց մյուս կողմից ուներ իր բացասական հետևանքները՝ որբանոցները չունեին մեկ ընդհանուր ծրագիր և գործնական ուղղվածություն: Բացի դրանից, այդ որբանոցները ցրված էին Անդրկովկասի շուրջ 16 վայրերում և հաճախ կտրված էին միմյանցից:

1914-15 թթ. Արևելյան Հայաստանում և Անդրկովկասում տիրող համընդհանուր քաոսի, շուրջ 200.000–250.000-ի հասնող արևմտահայ գաղթականության առկայության, տնտեսական ծանր դրության պայմաններում այնքան էլ հեշտ չէր որբ երեխաների համար որբանոցային շենքերի, հագուստի, սնունդի, դպրոցի, արհեստանոցի և դրանց համար անհրաժեշտ պարագաների հայթհայթումն ու որակյալ դաստիարակ-մանկավարժներով ապահովելը:

Որբանոցների ստեղծման գործընթացը կատարվեց հապճեպ, առանց նախնական պատրաստվածության՝ թելադրված ժամանակի և միջոցների սղության և որբերի թվաքանակի շարունակական աճի հետ:

Սեփական պետականությունը չունեցող հայ հասարակության համար Անդրկովկասում ապաստանած շուրջ 5000 հասնող արևմտահայ որբ երեխաների խնամքը չափազանց բարդ և պատասխանատու խնդիր էր, բայց հայ ժողովուրդը պատվով դուրս եկավ այդ մեծ պատասխանատվությունից:

Հայ հասարակական կազմակերպություններին ու ընկերություններին հաջողվեց հարթել որբախնամ գործի բազմաթիվ խնդիրներ՝ երեխաների ֆիզիկական գոյությունն ապահովված էր և մեծ աշխատանքներ էին տարվում նրանց դաստիարակության և կրթության ուղղությամբ:

Որբախնամ գործի սկզբնավորմանը պետք է հաջորդեր արդեն կայացման և բեղուն գործունեության շրջանը, որը ցավոք ընդհատվեց 1917-1918 թվականների քաղաքական վայրիվերումների և 1918 թ-ի թուրքական արշավանքի հետևանքով:

Երկրորդ գլխում՝ «*Որբանոցները պետական քաղաքականության ոլորտում*», ներկայացվում է 1918 թ. թուրքական արշավանքի ծանր հետևանքները, երբ

---

[27] Սակայն փախստականների և որբ երեխաների համար պետության կողմից բաց թողնված գումարները անօրինաբար յուրացվում էին Կովկասյան վարչակազմի պաշտոնյաների կողմից, և գումարների զգալի մասը իր նպատակին չէր ծառայում:

[28] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 602, թ. 12, նաև Հորիզոն, 9 հոկտեմբերի, 1915:

աճում էր հայ գաղթականների թիվը, շարունակվում էր հայ երեխաների որբացումը: Պաշտոնական տվյալների համաձայն, 1918թ. դեկտեմբերին նրանց թիվը հասնում էր 40.000-ի[29]:

Բացի այդ, Անդրկովկասում դեռևս 1915-1917 թթ. գործող որբանոցների զգալի մասը, հայտնվելով թուրքական արշավանքի ճանապարհին, ամբողջովին վերացվել էր, և երկրամասում գործող 93 որբանոցներից 1918 թ. հունիսին մնացել էին ընդամենը 35-ը՝ Հայաստանի սահմաններում և 27-ը՝ Վրաստանում[30]:

Եղած մարմիններն ու անհատ գործիչները տնտեսական տագնապի հետևանքով անզոր էին դիմադրել կարիքներին և հոգ տանել հազարավոր որբ երեխաների մասին, եթե որբանոցները պետության սեփականությունը չդառնային:

1918 թ. մայիսի 28-ին քաղաքական բարդ իրավիճակներում ծնված Հայաստանի Հանրապետության նորաստեղծ կառավարությունը բազմաթիվ խնդիրների շարքում ստիպված էր լուծել շատ կարևոր մի խնդիր ևս՝ գաղթականության և որբերի խնամատարությունը, որոնց թիվը Հայաստանում արդեն տատանվում էր 40.000-50.000: Հարկավոր էր շատ արագ իրականացնել որբանոցների հիմնման աշխատանքները և որքան հնարավոր է շատ երեխաներ փրկել վերջնական կործանումից:

1918 թ. հոկտեմբերի 11-ից Հայաստանի խորհրդարանի «Գաղթական որբերի խնամատարության և դաստիարակչության մասին» հատուկ օրենքով կառավարությունը ստանձնեց որբանոցային գործը:

Այսպիսով, առաջին անգամ հայ որբերի խնամատարության և դաստիարակության նպատակով մշակվեց պետական քաղաքականություն, իսկ որբանոցները դարձան պետական հաստատություններ, որտեղ հոգ էր տարվելու երեխաների ոչ միայն ֆիզիկական գոյության, այլև դաստիարակության ու կրթության մասին:

Թեև որոշման մեջ հստակորեն նշվում էր, որ պետությունը իր վրա է վերցնում Հայաստանի սահմանների բոլոր գաղթական որբերի խնամատարությունը, սակայն շուտով պարզ է դառնում, որ գոյություն ունեցող պայմաններում դա անհնարին է, և կառավարությունը որոշում է առաջիկայում որբանոցներ բացել միայն 10.000 որբ երեխաների համար՝ յուրաքանչյուրին հատկացնելով ամսական 150 ռուբլի նպաստ[31]:

Իհարկե, գործի պատասխանատուները հնարավորինս ջանում էին ավելի մեծ թվով երեխաներ ընդգրկել որբանոցներում, և 1918-1919 թթ. հանրապետությունում շարունակվում էր որբանոցների բացումը, այդուհանդերձ գնալով ակնհայտ էր դառնում, որ այս հարցում ավելի շատ պետք է ներգրավել հասարակությանը և հասարակական կազմակերպություններին:

Շատ կարևոր էր հատկապես այն կազմակերպությունների և ընկերությունների օգնությունը, որոնք այս գործում ունեին բավականաչափ փորձ և ներդրում: Այդպիսի կազմակերպություններից էին Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը, Մոսկվայի հայկական կոմիտեն, Եղբայրական օգնության էջմիածնի և Երևանի կոմիտեները:

---

[29]ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 33, 2-րդ մաս, թ. 84:
[30]ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 79, թ. 84-89:
[31]Կառավարության լրաբեր, 26 հոկտեմբերի, 1918, նաև Աշխատավոր, 23 հոկտեմբերի,1918:

Այսպես, Հայաստանի Հանրապետության առաջին տարում մեծ դժվարություններով հաջողվեց կազմակերպել որբանոցային գործը և պետական խնամքի տակ վերցնել շուրջ 10.000 որբ երեխաների:

Առաջին անգամ ցեղասպանության և թուրքական արշավանքի հետևանքով որբ մնացած երեխաների նկատմամբ հոգածությունը ունեցավ ազգային-պետական մոտեցում: Հստակեցվեց որբանոցների նշանակությունը, կազմակերպվեց համակարգված օգնություն և վերահսկողություն:

Առաջին անգամ որբանոցային գործի մեջ ուշադրություն դարձվեց որբ երեխաների իրավական դրությանը՝ նրանց անձնական և գույքային իրավունքների պաշտպանությանը:

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո երկրի արտաքին քաղաքական խնդիրները ուղղակիորեն անդրադարձան սոցիալ-տնտեսական վիճակի վրա: Կառավարությունը ստիպված էր պարբերաբար ավելացնել որբանոցներում խնամվող երեխաների ամսական նպաստները: Եթե 1918 թ. սկզբին նախատեսված էր ընդամենը 70 ռ., ապա 1918 թ. հոկտեմբերին՝ 150 ռ., իսկ հետո նաև՝ 240 ռ.[32]:

Սակայն միայն գումարներն ավելացնելով հարցը լուծում չէր ստանում այն պարզ պատճառով, որ Հայաստանում ապրանք չկար, իսկ դրամը գնալով արժեզրկվում էր՝ 8 ամսվա ընթացքում այն արժեզրկվել էր 50 անգամից ավելի:

Կառավարության համար չափազանց դժվար էր երկրի սոցիալ-տնտեսական նման պայմաններում որբանոցների հետագա պահպանումը, կամ առավել ևս դրանց քանակի ավելացումը, մինչդեռ հազարավոր որբ երեխաներ շարունակում էին մնալ առանց խնամքի՝ փողոցներում: Հարկավոր էր փրկել նաև նրանց գոյությունը:

Որբախնամ գործում Հայաստանին իրական օգնություն ցույց տվեց և բազմահազար հայ մանուկների վերջնական կործանումից փրկեց Մերձավոր Արևելքի օգնության Ամերիկյան կոմիտեն՝ Ամերկոմը:

1919 թ. ապրիլի 12-ին Հայաստանի Հանրապետության Խնամատարության և Աշխատանքի նախարարը և Ամերկոմի հայկական բաժանմունքը ի դեմս բաժանմունքի լիազոր կապիտան Էլդրրի, կազմում են համաձայնագիր, որով Ամերկոմի հայկական բաժանմունքին է հանձնվում ինչպես Հայաստանի, այնպես էլ Վրաստանի սահմաններում գտնվող պետական և հասարակական կազմակերպությունների, որբանոցների, հիվանդանոցների և դեռ անապաստան մնացած որբերի խնամքը և դաստիարակությունը՝ առանց նրանց թվի սահմանափակման:

1919 թ. մայիսի 1-ից Ամերկոմին հանձնվեցին՝ 90 որբանոց, 10 հիվանդանոց 13.942 որբերով[33]:

Հասարակական որբախանամ կազմակերպությունների ներկայացուցիչները սկզբունքորեն ընդունելով Ամերկոմի օգնությունը, դեմ էին երկրի կարևորագույն խնդիրը՝ պետության ապագա քաղաքացիների խնամքն ու դաստիարակությունը օտարերկրացիներին վստահելուն:

Որբանոցային գործը ամբողջությամբ Ամերկոմին հանձնելուց ընդամենը մեկ ամիս անց պարզվեց, որ կոմիտեն ի վիճակի չէ ամբողջովին իր վրա վերցնել բոլոր հայ որբ երեխաների խնամատարությունը:

---

[32] ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 254, թ. 35:
[33] ՀԱԱ, Ֆ. 276, ց. 1, գ. 79, թ. 84-89:

Կոպիտ հաշվարկներով որբանոցներից դուրս էր մնացել մոտ 20.000 երեխա[34]: Պարզ էր մի բան, պետությունը պետք է վերսկսեր որբախնամ գործունեությունը և հոգ տաներ մյուս անապաստան երեխաների մասին:

Որբերի խնամատարությունը վերսկսելու նպատակով Հայաստանի կառավարությունը Ամերկոմից պահանջեց հասարակական կազմակերպություններին պատկանող որբանոցները՝ իրենց սաներով[35]: 1919 թ. վերջին Հայաստանի Խնամատարության նախարարությանը հաջողվեց հավաքել և խնամք իրականացնել միայն 10.963 երեխաների նկատմամբ որոնց թիվը այդպես էլ չավելացավ, ընդհակառակը՝ գնալով նվազեց: Կառավարությունը չէր հասցնում բավարարել որբանոցների համար անհրաժեշտ գումարները, և որոշ ծախսեր անգամ կրճատվում էին:

Կարգավորելով շենքային և կազմակերպչական մի շարք խնդիրներ՝ Ամերիկյան կոմիտեն ժամանակի ընթացքում սկսեց ավելացնել իր խնամքի տակ գտնվող որբանոցների թիվը և պետական որբանոցների սաների մի մասը սկսեց տեղափոխվել ամերիկյան որբանոցներ:

Ամերիկյան կոմիտեն ժամանակի ընթացքում իրականացնում է իր որբանոցների կենտրոնացումը Ալեքսանդրապոլում: Բոլոր որբ երեխաներին Ալեքսանդրապոլում կենտրոնացնելը կոմիտեի որբախնամ ծրագրերից է եղել: Այս դեպքում հեշտանում էին կազմակերպչական աշխատանքները, դպրոցական գործը, արհեստանոցների և գյուղատնտեսական աշխատանքների իրականացումը:

Ալեքսանդրապոլում որբանոցները տեղակայված էին նախկինում ռուսական զորանոցներ՝ Պոլիգոնում, Կազաչի պոստում և Սևերսկիում: Դրանք ունեին ընդարձակ տարածք և քարաշեն կառուցվածք, որը շատ հարմար էր որբանոցի համար: Պոլիգոնը նախատեսված էր տղաների, մյուս երկուսը՝ աղջիկների համար:

Ամերկոմի բոլոր որբանոցներում հայ որբ երեխաների ֆիզիկական գոյությունը ապահովված էր. երեխաները լավ են սնվել, մշտապես եղել են բժշկական հսկողության տակ, հոգ է տարվել նրանց ֆիզիկական և գեղագիտական դաստիարակության մասին, կազմակերպվել են խաղեր, թատերական ներկայացումներ, դասախոսություններ և այլ միջոցառումներ:

Չնայած բազմաթիվ խոչնդոտներին և մասնակի թերացումներին, որոնց մեծ մասը թելադրված էր ժամանակի համընդհանուր կարիքով և երկրի ծանր տնտեսական կացությամբ, մինչև 1920 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսները որբախնամ գործը Հայաստանում շարունակվում էր և բավականին կազմակերպված հունով էր ընթանում:

Սակայն 1920 թ. սեպտեմբերի 23-ին թուրքական զորքերը մտան Հայաստան և սկսվեց թուրք-հայկական պատերազմը, որը նորանոր դժբախտություններ և աղետներ բերեց հայ ժողովրդին:

Թուրքական արշավանքին հաջորդեց Հայաստանի խորհրդայնացումը:

1920 թ. դեկտեմբերի 2-ի հանձնագրով Հայաստանում փաստացի հաստատվեց խորհրդային վարչակարգ: ՀԽՍՀ Հեղկոմի որոշմամբ ՄՀԿ-ի և ԿՀԲԸ-ի բոլոր հաստատությունները լիկվիդացվում են: Լիկվիդացված

[34] ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 733, թ. 1:
[35] Նույն տեղում, գ. 750, թ. 126:

կազմակերպություններին ենթակա հաստատությունները իրեց գույքով անցնում են ՀԽՍՀ-ի սոցիալական ապահովության ժողովրդական կոմիսարությանը[36]:

Խորհրդային իշխանությունները, հաշվի առնելով ամերիկացիների անգնահատելի օգնությունը որբ երեխաների պահպանության գործում, ստիպված էին ընդունել նրանց առաջարկը՝ շարունակելու հայ որբ երեխաների խնամատարությունը: 1920 թ. դեկտեմբերին Ամերկոմի որբանոցներում խնամվող երեխաների թիվը կազմում էր 18.500[37]: Կոմիտեն իր գործունեությունը շարունակեց մինչև 1929 թ – ը՝ մինչև որբ երեխաների չափահաս դառնալը:

Երրորդ գլխում՝ ***«Հայաստանի Հանրապետության որբախնամ գործունեությունը նրա սահմաններից դուրս»*** նշվում է հանրապետության սահմաններից դուրս գտնվող հայ գաղթականության և որբ երեխաների խնամատարության մասին:

Ցեղասպանության և համաշխարհային պատերազմի հետևանքով իրենց հայրենի օջախները լքած արևմտահայ գաղթականության և որբ մնացած երեխաների քարավանները տարածվել էին մինչև Հյուսիսային Կովկաս, Վրաստան, Բաքու, Հյուսիսային Միջագետք, Իրան և այլ երկրներ:

Հայ և օտարերկրյա կազմակերպությունների և անհատ բարեգործների կողմից արդեն 1915-1918 թթ. բազմաթիվ որբանոցներ էին բացվել Թիֆլիսի, Բաքվի, Ելիզավետպոլի նահանգներում, Սուխումիում, Բաթումի մարզում:

Սակայն 1918 թ. թուրքական արշավանքը իր հետ բերեց ոչ միայն տասնյակ հազարավոր նոր գաղթականություն և որբ երեխաներ, այլև մեծացրեց նրանց տարածման աշխարհագրությունը: Շուրջ 650.000 հայ գաղթականներ և 50.000-ից ավելի որբ երեխաներ ցրվելով տարածվեցին մինչև Եկատերինոդար, Ռոստով և ավելի հեռու, իսկ մեկ այլ հատված էլ ապաստանեց Սալմաստում՝ չորս կողմից կտրված հայությունից, ենթարկված ամեն պատահականության:

Անդրկովկասյան Հանրապետության փլուզումից հետո անկախ հռչակված Վրաստանի և Ադրբեջանի հանրապետությունների տարածքում ևս հայտնվեցին հայկական տարածքներ, որտեղի հայ բնակչության ճակատագիրը նույնպես վտանգված էր:

Վրաստան էր հայտարարված նաև Բորչալուն, Ղազախը, Լոռին և Փամբակը: Ադրբեջանի Հանրապետության ստեղծումով վտագվեց Բաքվի հայության գոյությունը, իսկ Գանձակի, Ղարաբաղի, Շամախի, Նախիջևանի և Գողթնի հայությունը կտրվեց Հայաստանի Հանրապետությունից: Հայաստանի անկախության հռչակումից հետո Վրաստանի Հանրապետության տարածքում գտնվող հայ գաղթականության և որբ երեխաների խնամքն ընկավ Վրաստանի Հայոց ազգային խորհրդի վրա: Սահմանային վեճերի հետևանքով միաժամանակ Հայաստանի Հանրապետությունը չուներ իր դիվանագիտական ներկայացուցչությունը և չէր կարող պետական մակարդակով իրականացնել հայ գաղթականության, այդ թվում՝ որբ երեխաների խնամատարությունը:

Միայն 1919 թ. մարտին հաջողվեց կարգավորել հայ-վրացական հարաբերությունները: 1919 թ. մարտի 8-ի հայտարարությամբ Վրաստանի կառավարությունը ճանաչեց Հայաստանի անկախությունը: Մարտի սկզբին վերաբացվեց հայկական դիվանագիտական ներկայացուցչությունը Մ. Թումանյանի պաշտոնակատարությամբ, որին հետո փոխարինեց Լ. Եվանգուլյանը:

---

[36] ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 627, թ. 44:
[37] ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 328, թ. 15-23:

Հայաստանից դուրս գտնվող գաղթականներին և որբ երեխաներին օգնելու համար 1919 թ. մարտի 27-ին Հայաստանի Հանրապետության Խնամատարության նախարարության ներկայացուցիչ նշանակվեց Դ. Դավիթխանյանը՝ նրան էր հանձնարարված նաև Հյուսիսային Կովկասում գտնվող հայ գաղթականների խնամատարական գործի ընդհանուր վերահսկողությունը[38]:

Հայտնի պատճառներով Հայաստանի կառավարության կայացրած որոշմամբ 1919 թ. մայիսի 1-ից Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության տարածքում գտնվող որբ երեխաների խնամքը հանձնվում է Ամերկոմի հոգածությանը:

Այսպիսով, միայն Վրաստանում Ամերկոմի խնամքի տակ էին անցնում 21 որբանոցներ՝ շուրջ 4500 երեխաներով: 1919 թ. հուլիսի 1-ից Ամերկոմը Հայաստանին է վերադարձնում հանրապետությունից դուրս գտնվող որբանոցները:

Սակայն Հայաստանի կառավարության հորդորներից հետո Ամերկոմը համաձայնվում է իր խնամքի տակ թողնել նախկին 10 որբանոցները, /որոնցից 1-ը՝ ռուսական/, ընդամենը՝ 2000 որբ երեխաներով:

Երկիրը ֆինանսական ճգնաժամից դուրս բերելու համար կառավարությունը ստիպված էր միջոցներ ձեռք առնել և առաջին հերթին կրճատել հանրապետությունից դուրս կատարվող ծախսերը: Ի կենսագործումն այդ որոշման՝ հրահանգվեց Վրաստանի գաղթականությանը և որբախնամ մարմիններին, տեղափոխվել Հայաստան[39]:

Հայաստանը սահմանային վեճերի պատճառով թշնամական, հաճախ նաև պատերազմական վիճակում էր Ադրբեջանի Հանրապետության հետ, և այդ հարաբերությունները անմիջականորեն ազդում էին այդ հանրապետությունում ապաստանած հայ գաղթականության, ինչպես նաև տեղի հայ բնակչության վրա:

Արևմտահայ որբ երեխաների մուտքը Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներ սկսվեց 1915 թ-ից: Այն ժամանակ, երբ որբ երեխաների և գաղթականների առաջին քարավանները կուտակվել էին Էջմիածնի և Երևանի շուրջը և մահանում էին տասնյակներով և հարյուրներով, ստեղծվեց նրանց այլ վայրեր տեղափոխելու և որբանոցներում ապաստանելու անհրաժեշտություն:

Այդ երեխաներին առաջին օգնության ձեռք մեկնողներից էր Բաքվի Հայոց Մարդասիրական Ընկերությունը[40]:

1918 թ. սեպտեմբերի 15-ին թուրք - թաթարական ուժերը գրավում են Բաքուն և հենց նույն օրը սկսվում է Բաքվի հայության կոտորածը, որը տևում է 3 օր և ավարտվում 30.000 հայերի ջարդերով: Կոտորածներից չեն փրկվում նաև որբանոցների երեխաները:

Դեռևս 1918 թ. հոկտեմբերի 26-ի նիստում Հայաստանի կառավարությունը ընդունել էր օրենք «Բաքվի աղետյալներին օգնելու մասին» և այդ նպատակով հանձնարարել Արտաքին գործերի նախարարությանը, բացել կրեդիտ՝ 500.000 ռուբլու չափով:[41]

Սակայն այդ գումարները բավական չէին գաղթականների ծով կարիքները հոգալու համար, իսկ որբախնամ գործը տևական էր և ավելի մեծ գումարներ էր պահանջում: Եթե հաշվի առնենք, որ միայն Բաքվի որբանոցների շուրջ 700 որբ

---

[38] ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 139, թ. 144:
[39] Հառաջ, 29 դեկտեմբերի, 1919:
[40] ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 1, թ. 1:
[41] Նույն տեղում, թ. 64:

երեխաների պահպանության համար ամսական անհրաժեշտ ծախսը կազմում էր 100.000 ռուբլի, ապա պարզ էր, որ Հայաստանի հատկացրած միջոցներով Ադրբեջանի բոլոր որբ երեխաների խնամատարությունը հնարավոր չէր իրականացնել: Այս գիտակցությամբ էլ Վրաստանում Հայաստանի արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչ Ջամալյանը բանակցություններ է սկսում Վրաստանում Ամերկոմի ներկայացուցչության հետ՝ Բաքվի հայ որբերի պահպանության խնդրանքով:

Չունենալով իր պաշտոնական ներկայացուցիչը Ադրբեջանում՝ Հայաստանի կառավարությունը իր բոլոր հարցերը լուծում էր Վրաստանի իր ներկայացուցչի միջոցով, իսկ հայ-վրացական կոնֆլիկտից հետո զրկվեց նաև այդ հնարավորությունից:

Մնում էին միայն ազգային խորհուրդները:

1919 թ. մարտի կեսերից Հայաստանի և Ադրբեջանի հանրապետությունների միջև ստեղծվում են դիվանագիտական հարաբերություններ:

Բաքվում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ է նշանակվում Տ. Բեգզադյանը[42], որն իր պաշտոնավարման հենց սկզբից Գանձակի և Բաքվի Հայոց ազգային խորհուրդների օգնությամբ ձեռնամուխ է լինում հանրապետությունում կարիքավոր հայ բնակչության խնդիրների լուծմանը:

1919 թ. մարտի 10 - ին Հայաստանի կառավարությունը որոշում է ընդունում «Հոգալ Վրաստանում և Ադրբեջանում գտնվող գաղթականների և որբերի խնամատարությունը»[43]:

Բոլոր հայ որբերի վիճակը սկսեց լավանալ, երբ նրանց խնամքը իր վրա վերցրեց Ամերկոմը:

1919 թ. մայիսի 22-ին Հայաստանի Արտաքին գործերի նախարարությանն ուղված գրության մեջ Բաքվի հայկական լրատվական բյուրոյից հայտնում են՝ «Համեմատաբար լավ է հայ որբերի դրությունը, քանի որ հայկական որբանոցներն անցել են Ամերկոմին, որը էական օգնություն է ցույց տալիս որբերին»[44]:

Պետք է նշել, սակայն, որ Ամերկոմի հովանավորությունը Ադրբեջանի հայ որբերի նկատմամբ սահմանափակվում էր միայն դրամական օժանդակությամբ, որը տրամադրվում էր տեղական մարմիններին, կամ որբախնամ գործն իրականացնող պատասխանատուներին:

1920 թ. ապրիլի 28-ին Ադրբեջանը խորհրդայնացավ: Իսկ այդ ժամանակի որբանոցների մասին այլևս տեղեկություններ չկան: Հնարավոր է, որ նրանց մի մասը իր հայրենակիցների հետ գաղթել է Հայաստան, մյուսները մնացել են տեղում և ցրվել զանազան վայրերում:

1920 թ. հունիսից վավերաթղթերում տեղեկություններ չկան նաև Գանձակի որբանոցների մասին: Ենթադրվում է, որ դրանք նույնպես ցրվել են:

Հյուսիսային Կովկասում արևմտահայ որբ երեխաները առաջին անգամ հայտնվեցին 1918 թ. թուրքական արշավանքի ժամանակ:

Երբ 1915 թ. զանազան կազմակերպությունների կողմից սկսվեց որբանոցների կազմակերպումը, որոշվեց հայ որբ երեխաներին չցրել Արևելյան Հայաստանից շատ հեռու վայրեր և սահմանափակվել միայն Բաքվով և Թիֆլիսով: Պատճառն այն էր, որ հայ որբ երեխաները անհրաժեշտաբար պետք է

---

[42] Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր.,1993, էջ 266:
[43] ՀԱԱ, Ֆ. 205, ց. 1, գ. 704, թ. 1:
[44] Նույն տեղում, գ. 79, թ. 198:

մեծանային հայկական միջավայրում, առանց նրանից կտրվելու՝ իրենց ազգային դիմագիծը չկորցնելու նպատակով: Չնայած հայկական որբանոցները իսկզբանե ցրված են եղել Անդրկովկասի զանազան վայրերում, սակայն այդ վայրերում միշտ եղել է հայ ստվար բնակչություն և նշված վտանգը չկար:

Հաշվի առնելով Հյուսիսային Կովկասի նպաստավոր պայմանները՝ հատկապես էժան ապրուստը և աշխատատեղի առատությունը նպատակ է եղել 12 տարեկանից բարձր որբ երեխաներին տեղափոխել Նովոռոսիյսկի և Կուբանի շրջանները:

Հայաստանի Հանրապետությունը Հյուսիսային Կովկասի հայ գաղթականության և շուրջ 1000 որբ երեխաների խնամատարությունը իրականացնելու համար Խնամատարության նախարարության ներկայացուցիչ է նշանակում Դ. Դավիթխանյանին, որը միաժամանակ նաև Վրաստանի ներկայացուցիչն էր[45]:

Սակայն այդ երեխաների խնամքը Հայաստանի իշխանությունները հաճախ ստիպված էին իրականացնել Հայոց ազգային խորհուրդների և հասարակական կազմակերպությունների միջոցով՝ սահմանափակվելով այդ նպատակի համար գումարներ փոխանցելով, որովհետև չունեին կանոնավորված դիվանագիտական պաշտոնական հարաբերություններ հարևան հանրապետությունների՝ Վրաստանի և Ադրբեջանի հետ:

Եզրակացությունում ամփոփել ենք ատենախոսության մեջ քննարկված խնդիրները, և եկել հետևյալ եզրահանգումների՝

1. Ռուսական կայսրության սահմանները հատած և գերազանցապես Արևելյան Հայաստանում և Անդրկովկասում, մասամբ նաև Հյուսիսային Կովկասում ապաստանած որբ երեխաների խնամքը 1915-1918 թթ. գրեթե ամբողջությամբ իրենց վրա վերցրեցին հայկական զանազան բարեգործական ընկերություններ, կազմակերպություններ, անհատներ: Հայ ժողովրդին անգնահատելի օգնություն ցույց տվեցին նաև օտարերկրյա ընկերությունները: Նրանց կողմից Անդրկովկասի զանազան վայրերում հիմնված որբանոցներում հոգ էր տարվում երեխաների ոչ միայն ֆիզիկական գոյության, այլև կրթության և մասնագիտական դաստիարակության մասին:

2. Որբ երեխաների պահպանության գործին լծված ընկերությունների, կազմակերպությունների և ընկերությունների բազմազանությունը ավելի հաճախ խանգարում էր նրանց աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը: Եվ չնայած բազմաթիվ փորձերին, նրանց բոլորի աշխատանքները միավորել և համակարգել չհաջողվեց: 1915-1918 թթ. ստեղծված որբանոցները գործում էին միմյանցից կտրված, չունեին ընդհանուր ծրագիր, նպատակներ, բացակայում էր ընդհանուր վերահսկողությունը:

Այդ իսկ պատճառով, 1915-1918 թթ. որբանոցներին բնորոշ էին մի շարք թերություններ, որոնցից շատերը պայմանավորված էին ինչպես երկրի ծանր դրությամբ, որբանոցային գործի կազմակերպիչների անփորձությամբ, այլև որբախնամ բոլոր մարմինների աշխատանքները համակարգող և վերահսկող ընդհանուր կենտրոնի բացակայությամբ:

3. 1918 թ. թուրքական արշավանքի և նրանց կողմից Արևելյան Հայաստանի մի շարք շրջանների նվաճման հետևանքով ավելի քան 50.000 ծնողազուրկ երեխաների պահպանության դժվարին ու պատասխանատու գործը իր ողջ

[45]ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 139, թ. 144:

ծանրությամբ բաժին ընկավ Հայաստանի նորահռչակ հանրապետությանը: Եվ դժվար է մտածել անգամ, թե ինչ կլիներ, եթե նրանց խնամքը պետական մոտեցում չստանար և որբանոցները պետության սեփականությունը չդառնային:

1918–1920 թթ. Հայաստանի Հանրապետության գոյության տարիներին որբախնամ գործում սկիզբ առավ նոր փուլ, առաջին անգամ որբ երեխաների նկատմամբ իրականացվեց ազգային պետական քաղաքականություն: Մշակվեց հատուկ օրենք այդ երեխաների խնամատարության և դաստիարակության մասին: Որբանոցային գործի մեջ ուշադրություն դարձվեց որբ երեխաների իրավական դրությանը՝ նրանց անձնական և գույքային իրավունքների պաշտպանությանը: Բոլոր անհրաժեշտ աշխատանքները կազմակերպելու և համակարգելու, պետական հատկացումները առավել նպատակային օգտագործելու և պետական վերահսկողություն սահմանելու նպատակով Խնամատարության նախարարությանը կից ստեղծվեց Որբանոցային վարչություն:

4. Հաշվի առնելով նախկինում ունեցած փորձն ու ներդրումները՝ Հայաստանի կառավարությունը որբախնամ գործում ընդգրկեց այնպիսի հայտնի կազմակերպություններ, ինչպես ՄՀԿ, ԿՀԲԸ-ն: Նրանց աջակցությունը առանձնապես կարևոր էր Հայաստանի սահմաններից դուրս, հարևան հանրապետություններում հայտնված հայ երեխաների պահպանության համար, մանավանդ այն ժամանակ, երբ Հայաստանը նրանց հետ չուներ կարգավորված դիվանագիտական հարաբերություններ:

5. Հանրապետության տնտեսական խորը ճգնաժամը, մի շարք ապրանքների իսպառ բացակայությունը առաջին հերթին անդրադառնում էին պետական որբանոցների կյանքի վրա: Եվ չնայած պետական բազմաբնույթ միջոցառումներին, երկրում տիրող սոցիալ-տնտեսական աղետալի վիճակը նշանակալի փոփոխություններ չկրեց: Այս պայմաններում որբ երեխաների խնամքն իրենց վրա վերցնելու Ամերկոմի առաջարկը փրկության հույս էր թե հանրապետության և թե որբանոցների համար:

6. 1920 թ. սկզբից հանրապետության ներքին կյանքում և որբանոցներում զգալի դրական տեղաշարժեր են արձանագրվում՝ կապված 1919 թ. հաջող բերքի և Ամերկոմի օգնության չափերի մեծացման հետ: Ցրվում են բոլոր այն որբանոցները, որոնք բացվել էին չքավոր երեխաների պահպանության համար, Հայաստան են տեղափոխվում նրա սահմաններից դուրս գտնվող որբ երեխաները:

Այսպես, 1920 թ. սկզբից մինչև թուրք-հայկական պատերազմը, որբ երեխաների դրությունը գնալով բարելավվում է, որը ցավոք ընդհատվում է թուրքական զորքերի առաջխաղացման և նվաճումների հետևանքով:

7. Անդրկովկասյան երկրամասում և Հյուսիսային Կովկասում հայտնված երեխաներից շատերի որբացման պատճառ էին դարձել թուրքական արշավանքները և Անդրկովկասյան հանրապետությունների անկախության հետևանքով ծայր առած ազգամիջյան կռիվները: Այդ երեխաների խնամքը Հայաստանի իշխանությունները ստիպված էին իրականացնել Հայոց ազգային խորհուրդների և հասարակական կազմակերպությունների միջոցով՝ սահմանափակվելով այդ նպատակի համար գումարներ փոխանցելով, որովհետև չունեին դիվանագիտական կարգավորված հարաբերություններ հարևան հանրապետությունների՝ Վրաստանի և Ադրբեջանի հետ: Այս հարցում Հայաստանին անգնահատելի ծառայություն մատուցեց նաև Ամերկոմը, որի գործունեությունը տարածվում էր նաև նշված երկրներում:

Այսպիսով, Հայաստանի (1918–1920 թթ.) Հանրապետությունը, հռչակված լինելով ընդամենը 12.000 կմ^2 տարածքի վրա, շրջապատված թշնամի պետություններով, բազմաթիվ խնդիրների շարքում ուներ ոչ պակաս կարևոր մի խնդիր ևս՝ հանրապետությունում և նրանից դուրս գտնվող 50.000–60.000 որբ երեխաների խնամատարությունը, որի իրականացումը անմիջականորեն կապված էր երկրի ներքին և արտաքին խնդիրների հետ, քանի որ դրանք առաջին հերթին ազդում էին հասարակության հենց այդ՝ ամենաանպաշտպան զանգվածի վրա:

Եվ չնայած այդ գործում առկա բոլոր խոչնդոտներին ու դժվարություններին, Հայաստանի իշխանությունները իրենց 2.5 ամյա գոյության ընթացքում ոչ մի ջանք, հնարավորություն և միջոցներ չխնայեցին հայ որբ երեխաների պահպանության, նրանց դաստիարակության և մասնագիտական կրթության համար:

8. Հասարական կազմակերպությունների մի մասը իր որբախնամ գործունեությունը սկսելով դեռևս 1915 թվականից, պատվով շարունակեց մինչև Հայաստանի խորհրդայնացումը և անգնահատելի ծառայություն մատուցեց թե Հայաստանի կառավարությանը, թե հայ ժողովրդին ընդհանրապես:

Հայ երեխաների պահպանության ազգանվեր գործում չափազանց մեծ ավանդ ունեցավ Մերձավոր Արևելքի օգնության Ամերիկյան կոմիտեն՝ Ամերկոմը, որն իր առաքելությունը շարունակեց նաև խորհրդային կարգերի հաստատումից հետո՝ մինչև 1929–30 թվականները:

Ատենախոսության հիմնական դրույթները շարադրված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Մոսկվայի հայկական կոմիտեի որբախնամ գործունեությունը 1915–1920 թթ., Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, 2005, թիվ 10–11, էջ 197–204:

2. Որբախնամ գործի սկզբնավորումը Արևելյան Հայաստանում և Անդրկովկասում 1915-1917 թթ., Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, 2006, թիվ 12, էջ 103–111:

3. Հայաստանի Հանրապետության որբախնամ գործունեությունը Վրաստանում և Ադրբեջանում, Մերձավոր Արևելք, 2009, թիվ 6, էջ 100–107:

4. ՀՀ սոցիալ-տնտեսական դրությունը և որբ երեխաների խնամքի խնդիրը 1918–1920 թթ., Լրաբեր հասարակական գիտությունների, 2009, թիվ 2, էջ 48–54:

КИРАКОСЯН МАРИАМ ВРЕЖОВНА

ДЕЯТЕЛЬНОСТЬ ПО УХОДУ ЗА СИРОТАМЫ ГОСУДАРСТВЕННЫХ ОБЩЕСТВЕННЫХ УЧРЕЖДЕНИИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИИ, НА СЕВЕРНОМ КАВКАЗЕ И В ЗАКАВКАЗЬЕ В 1918–1920 ГГ.

Дисертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 "История Армении".

Защита состоится 16-ого декабря 2011 г., в 14^{00} по адресу: 0019, г. Ереван, пр. Маршала Баграмяна 24/4 на заседании специализированного совета 004 при Институте Истории НАН РА.

РЕЗЮМЕ

Анализ истории армянских детей-сирот составная часть полной истории армянского геноцида и без раскрытия и научного анализа этих проблем, вопросы изучения историй геноцида не могут считаться полными. Разъяснение вышеупомянутой проблемы имеет как историческое и современное, так и политическое значение, поскольку она показывает, какие трагические последствия могут произойти, когда идеология культ нации становится государственным политикой и поднимается на уровень государственной власти.

Исходя из вышесказанного, наша цель выяснить историю армянских детей, которые осиротели во время первой мировой войны в последствиях Турецких варварств и нашли приют в кавказском регионе, представлять полную историю западно-армяанских детей-сирот во времена Первой Республики Армении: в 1918-1920 годах, раскрыть деятельность по уходу за сиротами армянских и иностранных организаций и благотворительных компаний.

Работа состоит из введения, трех глав, заключения и списков использованных источников и литературы.

Во введение обоснованы актуальность темы, научная новизна и значимость. Представлены цели и задачи, теория ресурсов и уровень исследования.

В первой главе представлены проблемы укрытия армянских беженцев и детей-сирот, которые были признаны на территории русской империи из-за военных действий и массовых убийств западно-армян в Кавказском фронте и чрезвычайные меры, которые были приняты для обеспечения их физического существования. Процесс создания детских домов была спешно выполнена без предварительной подготовки с экспромтом времени, с нехваткой средств и с непрерывным ростом числа детей-сирот.

Для армянского общества, который не имеет собственного состояния, забота западно-армянских детей-сирот, жившие на Кавказе, слишком трудная и

ответственная проблема, но армянский народ с честью вышел из этой трудной ситуации.

Армянским общественным организациям и компаниям удалось решать многие проблемы дела по уходу за сиротами: физическое существование детей была обеспечена и большие работы были проведены в их воспитании и образовании.

Во второй главе представлены серьезные последствия турецкой нашествии 1918-ого года, государственная политика в деле по уходу за сиротами правительством Республики Армении, реальная картина детей, которые находятся в Республике Армении, деятельность армянских и зарубежных компаний и благотворительных организации.

Впервые последствие геноцида и турецкого нашествия забота по детьми-сиротами имела национально-государственный подход. Уточнялась значение детских домов, организовывалось скоординированная помощь и контроль.

В третьей главе указана об армянских беженцев, которые находились за рубежом республики, в Грузии, в Азербайджане, в северном Кавказе и об уходе детей-сирот. Республика Армения, будучи не в состоянии заботиться о сохранении всех армянских несчастных младенцев за ее пределами, по крайней мере, должен был думать о спасении детей-сирот из Закавказья и Северного Кавказа.

Турецкие нашествия и межэтнические сражения за независимости закавказских республик стали причиной осиротения многих детей в Кавказском регионе. Армянским властям пришлось реализовать уход за детьми с помощью Армянского национального совета и неправительственных организаций ограничивая перевод денег для этой цели , потому что они не имели официальных дипломатических отношений с соседними республиками: с Грузией и с Азербайджаном. В этом вопросе неоценимую услугу предложили Армении Амерком, деятельность которого была распространена в этих странах. Принимая во внимание дорогой и неэффективный метод этой помощи правительство Армении, урегулировав свои внешние связи, бралась за делом переводить детей-сирот свой родной город.

В заключениях обобщали вопросы обсуждаемые в диссертации и дали выводы.

KIRAKOSYAN MARIAM

THE ORPHAN CARE ACTIVITIES OF STATE AND PUBLIC INSTITUTIONS IN THE REPUBLIC OF ARMENIA, NORTH CAUCASUS AND TRANSCAUCASUS IN 1918–1920

Dissertation for the degree of the Doctor of History on the spesializasion of "Histori of Armenia" 07.00.01.

The defense of the dissertation will be held on Desamber 16, 2011, 14 00, at the session of the Spesialized Council 004 by the Institute of History, NAS, RA.(Yerevan, Marshal Baghramyan ave. 24/4).

SUMMARY

The history analysis of Armenian orphan children is a component of the whole story of Armenian genocide and without the revelation and scientific analysis of that problems the study of the genocide history can't be considered complete.

The coverage of the above-mentioned problem has as historical and modern as well as political importance, as it shows what kind of tragical consequences can occur when the tribe adoring ideology becomes public policy and is being raised to the state government level.

Based on the foregoing, our aim is to elucidate the story of the children sheltered in the Caucasus region who became orphan because of Turkish barbarity in the years of the First World War, to present the whole story of Western Armenian and Eastern Armenian orphan children in the years of Armenian First Republic, in 1918–1920 years, to reveal the orphan care activities of Armenian and foreign organizations and charitable companies.

The works consists of the introduction, three chapters, the conclusion, the list of used sources and the list of literature.

In the introduction are substantiated the topic relevance, scientifico-practical novelty, and are presented the goals and objectives, the theory of sources and the level of being studied.

In the first chapter are presented the problems of sheltering Armenian refugees and orphan children who were found in the territory of Russian empire because of military operations and massacres of Western Armenians in the Caucasian front, and the emergency measures that were taken to ensure their physical existence. The process of constructing orphanages was very premature without preliminary readiness with the dictated time, lack of resources and with the continuous growth in the number of orphan children.

The care of Western Armenian orphan children who sheltered in the Caucasus was a very difficult and responsible task for Armenian society who didn't have its own posture, but Armenians handled that situation with dignity.

The Armenian organizations and companies succeeded in solving many problems of orphan care work: the physical existence of children was ensured and great works were carried out on their upbringing and education.

In the second chapter are presented the serious consequences of Turkish invasion in 1918, the state policy of the Government of Republic of Armenia in the orphan care work, the real picture of children in the area of Republic of Armenia, the activities of Armenian and foreign organizations and charitable companies.

It was the first time that the care for children who became orphan because of Genocide and Turkish invasion was considered to be a national-state approach. The role of orphanage was clarified, was organized coordinated help and supervision.

In the third chapter is mentioned about the care of orphan children and Armenian refugees in the Republic of Georgia, Azerbaijan and North Caucasus. The Republic of Armenia, being unable to care for the protection of all Armenian miserable infants outside it, had to think about the salvation orphan children of Transcaucasus and North Caucasus.

The reasons of orphanage of many children of the Caucasus region were Turkish invasions and inter-ethnic battles which began because of the independence of Transcaucasian republics. The Armenian authorities had to actualize the care of children with the help of Armenian National Councils and non-governmental organizations being limited in transferring money for that purpose, because they didn't have official diplomatic relations with neighboring republics: Georgia and Azerbaijan. In this issue an invaluable service was offered to Armenia by Amercom the activity of which was spread in these countries.

Taking into consideration the expensive and non-effective method of this help, the Government of Armenia, regulating its external relations, was set to transfer the orphan children to their native town.

In the conclusions we have summarized the issues discussed in the thesis and the conclusions.